



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 9 ՅՈՒՆԻՈՒՐ, 2023

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 17

ԱՆՄԵՂԻՆ ԱՂՕԹՔԸ

Ով Տէր, լսէ արդար բողոքս, մփիկ ըրէ աղաղակս,
ականջ րուր աղօթքիս, որ նենգաւոր շրթներէն չի գար:
Դաբավճիռս Դուն րուր, րես իմ ուղիղ ըլլալս:
Գիշեր արեն եկար եւ փորձեցիր սիրարս,
կրակով քննեցիր եւ չարութիւն չգարար մէջս,
ոչ ալ բերնիս մէջ՝ անիրաւութիւն:
Տեսայ մարդոց գործերը, բայց Քու խօսքիդ հեպտելով՝
հեռու մնացի արինահեղ մարդոց ապրելակերպէն:
Քայլերս Քու շախմատներու մէջ պահէ, որպէսզի ընթացքս չշեղի:
Ես քեզ կը կանչեմ, որովհետեւ գիտեմ թէ պարասխանս պիտի րաս, ով Ասարուած,
ականջդ ինձի խոնարհեցուր, լսէ խօսքերս:
Մքանչելի կերպով ցոյց րուր քու սէրդ,
Դուն՝ որ Քեզի ապախնողները Քու աջովդ կը փրկես իրենց հակառակորդներէն:
Աջի բիբի պէս պահէ զիս, Քու թելերուդ հովանիին րակ զիս պահպանէ
ամբարիշտներէն, որոնք կեանքիս կը սպառնան.
մահացու թշնամիներես, որոնք պաշարած են զիս:
Իրենց հարստութեան վարահած, եւ գուրջը մոռցած՝
ամբարարանութեամբ կը բանան իրենց բերանը:
Ահա կը հեքապնդեն զիս, եւ զիս պաշարած՝
ակնդէր կը հեքելին ինձի, զիս գեքին րապալելու համար,
առիւծի մը պէս՝ որ կնուզէ բզկտել, կորիւնի մը պէս՝ որ դարան մրած կը սպասէ:
Ել, ով Տէր, անոնց ճամբան կտրէ, զանոնք րապալէ.
Քու սուրովդ կեանքս փրկէ ամբարիշտներու ձեռքէն:
Տէր, Քու ձեռքովդ փրկէ զիս մարդոցմէ,
այս աշխարհի մարդոցմէ, որոնց բաժինը միայն այս կեանքն է:
Քու ամբարած դառնութեամբդ լեցուր անոնց որովայնները,
եւ ոչ միայն անոնց որդիները թող անով կշարանան,
այլ՝ թող անոնց թոռները եւս իրենց բաժինը ունենան:
Բայց ես արդարութեամբս պիտի րեսնեմ երեսդ.
երբ արթնամ՝ րեսքովդ պիտի կշարանամ:

ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Մմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւնս ես՝ նեղեղոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի րուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի րան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ԱՆՄԵՂԻՆ ԱՂՕԹԵՐԸ

Ահա անգամ մը եւս նեղութեան մէկ պահուն Դաւիթ իր աղօթքը կը բարձրացնէ առ Աստուած եւ կը խնդրէ հետեւեալը.- արդար բողոք ունի, լսէ, աղաղակ ունի, մտիք ընէ, աղօթքին ականջ փայ, որովհետեւ այս բոլորը՝ բողոք, աղաղակ եւ աղօթք, նենգաւոր շրթներէ չի գար: Հեղաքրքրական է, որ ամբողջ Սաղմոս կարծէք, Դաւիթ այնպէս կը ներկայացնէ որ ինք անմեղ է, ու արդար: Սա չի նշանակէր, որ Դաւիթ երբեք մեղք չէ գործած: Այլ, իր խնդրանքը այն, թէ որքան արդարացի է իր կրած այս նեղութիւնները իր սխալին դիմաց, անոր համար ալ Աստուծոմէ կը խնդրէ, որ Աստուած Ինք ըլլայ Դաւաւճիւն փութողը: Յաճախ մենք կը փորձենք մեր մարդկային կարողութեամբ, փրամաքանութեամբը, գիտութեամբը, եւ մարդկային արդարութեամբ վճիռներ փայլու, բայց կը մոռնանք, որ մարդ արարածը խախտուք, անհասարակամ, ու յաճախ, չըսելու համար միծր, նաեւ մարդուս դատաստանները թերի են, ուստի որպէսզի արդար դատարկութիւն փեղի ունենայ, պէտք է որ Արդար Դատարորը նայի դատին, այլապէս՝ կրնայ մարդս այնպիսի վճիռներ փայ, որ չհամապատասխանէ արդարութեան: Այնպէս ինչպէս այրի կինը երբ գնաց անիրաւ դատարորին ըսելու համար, արդար դատս փես, անիրաւը իրաւ դատ փեսնելու: Բայց այսպէղ Դաւիթ կը խնդրէ որ Աստուած Ինք միջամտէ, Ինք ներկայ ըլլայ, Ինք լսէ Դաւիթի աղաղակը, բողոքը, աղօթքը, որպէսզի արդարօրէն վճիռը փրուին, ինչ որ պիտի փրուի:

Յաջորդող համարները կու գան ցոյց փայլու Դաւիթի վստահութիւնը, որ երբ Աստուծոյ կանչէ, գիտէ որ Աստուած պատասխան պիտի փայ իրեն, ուստի կը խնդրէ որ խոնարհեցնէ ականջդ եւ լսէ խօսքերը: Նաեւ կ'արտայայտուի ըսելով, թէ Դուն գիտես սիրտս, այսինքն՝ խորհուրդներս, մտածումներս, կրակով քններ ես, որ այդ մտածումներուն մէջ չարութիւն չկայ: Ան նաեւ կ'ըսէ, որ հեռու մնացի արիւնահեղ մարդոց ապրելակերպէն: Քայլերս քու ճամբաներոց մէջ պահեցի, որպէսզի չշեղի: Ահա այսպէղ է Դաւիթի անմեղութիւնը, որ ան ինքզինք հեռու պահեց արիւնահեղ մարդոց ապրելակերպէն, ու Աստուծոյ ճամբաներուն մէջ պահեց քայլերը:

Եւ ահա Աստուծոմէ կը խնդրէ պաշտպանութիւն մահացու թշնամիներէն, եւ այդ պաշտպանութիւնը Աստուծոյ սիրոյն իբրեւ արտայայտութիւն: Աստուած առիթով մը ցոյց փութ էր Իր սէրը, եւ ահա այդ սիրոյն իբրեւ արտայայտութիւն, Դաւիթ նաեւ վստահութիւնը ունի որ Աստուած ոչ միայն պիտի լսէ Դաւիթի աղօթքը, այլ նաեւ պիտի պաշտպանէ: Հեղաքրքրական պատկերացումով մըն ալ Դաւիթ կը խնդրէ, որ Աստուած դինք պահէ որպէս աչքի բիբի պէս: Այնպէս ինչպէս մենք այնքան զգուշութեամբ ու գուրգուրանքով կը վարուինք մեր աչքերուն, որպէսզի յանկարծ չըլլայ թէ որեւէ մէկ վնաս հասնի, կամ որեւէ մէկը դաչի աչքի բիբին: Նոյնպէս ալ այսպէղ Դաւիթ ինքզինք կը պատկերացնէ որպէս Աստուծոյ աչքին բիբը, եւ կը խնդրէ որ Աստուած ալ նոյն գուրգուրանքով պահէ Դաւիթը, որեւէ մէկը չդաչի անոր:

Ահա յաջորդող համարներուն մէջ Դաւիթ կը ներկայացնէ թշնամիներուն ինչպիսին ըլլալը: Նախ անոնք պաշարած են զինքը, մահացու թշնամիներ են, իրենց հարստութեան վստահած, որ նաեւ կը շարունակէ ըսելով, որ անոնք գուրջ մոռցեր են, այսինքն՝ անգութ են, չեն ողորմիր: Անոնք կը նմանցնէ առիւծի, որ կ'ուզեն բզկտել: Եւ ահա կը խնդրէ, որ Աստուած ելէ եւ թշնամիները փախալէ: Դաւիթ Աստուծոյ կը յանձնէ իր դատը: Մենք որքանով կը յանձնենք մեր դատը Աստուծոյ, վստահելով Անոր որ Ինք է մեր պաշտպանը, Ինք է մեր արդար Դատարորը: Այո, երբ նեղութեան ու դժուարութեան մէջ ենք, կը խնդրենք Աստուծոմէ, որ միջամտէ, վերջ փայ: Բայց կարծէք փարիսէր կը փեւեն, մենք աւելի ծանր դժուարութիւններու փակ կը մնանք, եւ կու գայ պահը ըսելու, գիտես ինչ, դունք քու գլխուդ ճաշին նայիր, ինչ Աստուած: Աստուած քեզի խելքը փութ է, դուն գործածէ, դուն վստահիր ուժերուդ: Եւ յետոյ կու գանք այն եզրակացութեան ըսելով, ուժը գորաւորին է: Մի գուցէ, ճիշդ է արտայայտութիւնը մարդկային հասկացողութեամբ: Բայց կայ նաեւ մէկ այլ ուրիշ երեսը, երբ այս անգամ կը փեսնենք, բոլոր այն ուժերը որոնք, սակայն այսօր չկան երեկը երեսին: Ճիշդ է, որ անոնք անցեալին իրենց առիւծի դերը կատարեցին, սպաննեցին, կոտորեցին, բզկտեցին: Դաւիթ այս բոլորին մէջ նաեւ կը փորձէ փեսնել գալիքը, երբ կ'արտայայտուի ըսելով. «Անոնց բաժինը միայն այս կեանքն է»: Այսինքն՝ անոնք բաժին պիտի չունենան երկինքի մէջ: Ահա այս բաժինը կը յիշեցնէ մեծահարուստ մարդուն եւ աղքատ Դաւաւրոսին առակը, երբ պահը կը հասնի մեկնելու այս աշխարհէն, այս անգամ մեծահարուստ մարդը կը խնդրէ Արքայազանէն, որ Դաւաւրոսը գայ եւ իր ճկոյր մտաւորը դրէ շրթները, Արքայազան կը պատասխանէ ըսելով. «Ձեր եւ մեր միջեւ անդունդ կայ»: Սա չի նշանակէր, որ եթէ Աստուած բարիքներով կը լեցնէ մեր կեանքերը, ուրեմն արդարներ ենք: Իսկ արդարին բաժինը պիտի ըլլայ Աստուծոյ երեսը փեսնելու, Անոր փեսքովը կշտանալու: Եւ այս արդարացումը կու գայ նոյնինքն Տիրոջմէ, երբ Ան պիտի շնորհէ մեղքերու քաւութիւն: